

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼԻՔ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

ԺԲ.00.05 մասնագիտությամբ - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա,

քրեակատարողական իրավունք»

մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МЕЛИК АРТАШЕСОВИЧ МЕЛИКЯН

ПРОВОКАЦИЯ ПРЕСТУПЛЕНИЯ В УГОЛОВНОМ ПРАВЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических

наук по специальности 12.00.05 – "Уголовное право и криминология;

уголовно-исполнительное право"

ЕРЕВАН-2025

**Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. թեկ., դոցենտ

Տիգրան Վիգենի Սիմոնյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Աննա Ռազմիկի Մարգարյան

իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Սևակ Արթուրի Պողոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի փետրվարի 19-ին ժ. 14³⁰-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հունվարի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ

ժ. Ա. Ստեփանյան

Тема диссертации утверждена в

Ереванском государственном университете

Научный руководитель:

кандидат юридических наук, доцент

Тигран Вигенович Симонян

Официальные оппоненты:

доктор юрид. наук, профессор

Анна Размиковна Маргарян

кандидат юрид. наук, ассистент

Севак Артурович Погосян

Ведущая организация:

Российско-Армянский университет

Защита состоится 19-ого февраля 2025 года в 14³⁰ часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 17-ого января 2025 года.

Ученый секретарь специализированного совета:

кандидат юридических наук, ассистент

Ж. А. Степанян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Պրովոկացիան որպես սոցիալական երևույթ՝ տարաբնույթ դրսևորումներով հանդիպում է սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում և բնագավառներում:

Քրեական իրավունքի դաշտում պրովոկացիայի թերևս առանցքային դրսևորումը հանդիսանում է «Հանցագործության պրովոկացիան», որի բացահայտումը սկսում է եզրույթի բնորոշումից և ձգվում մինչ քրեական իրավունքի տարբեր ինստիտուտների հետ հարաբերակցության ուսումնասիրության տիրույթ՝ պայմանավորելով դրա զբաղեցրած առանձին տեղի վերաբերյալ հետազոտություններ անցկացնելու անհրաժեշտությունը:

Համընդհանուր ճանաչում ունեցող բնորոշման բացակայության պայմաններում հանցագործության պրովոկացիան տարբեր երկրների օրենսդրությամբ, դոկտրինալ մեկնաբանություններում, նախադեպային պրակտիկայում, մեկնաբանվում է տարակերպ:

Ներպետական օրենսդրությամբ հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ դրույթներն առաջին անգամ կողիֆիկացված հանդես եկան 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում՝ 62-րդ հոդվածով նախատեսված «Օտարերկրյա պետության ներկայացուցչի դեմ ուղղված տեռորիստական ակտ» հանցակազմի վերաբերյալ կարգավորմամբ:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) ավելացվեց նաև կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի հանցատեսակը՝ 350-րդ հոդվածում: Բացի այդ, հիշյալ օրենսգրքում, ինչպես 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածում, նախատեսված 388-րդ (Ահաբեկչական գործողությունն օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի դեմ), 389-րդ (Միջազգային ահաբեկչությունը) հոդվածներով սահմանվեցին հանցագործության պրովոկացիայի էությունից բխող դրույթները:

Արդեն 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ գործող ՀՀ քրեական օրենսգրքով հետազոտման օբյեկտի մասով կատարվեցին ընդգրկում փոփոխություններ, ընդ որում ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի

կարգավորումների ձևով, որոնք նոր հորիզոններ բացեցին հանցագործության պրովոկացիայի զարգացման միտումները բացահայտելու և արդեն սահմանված կարգավորումների հիմնախնդիրները հետազոտելու ու դրանց շուրջ համապատասխան եզրահանգումներ կատարելու և գիտականորեն հիմնավորված առաջարկներ ներկայացնելու համար:

Մասնավորապես, գործող ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում, համապատասխանաբար՝ 32-րդ և 34-րդ հոդվածներում զետեղվեցին հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ համապատասխան դրույթներ, որոնք ընդլայնեցին տվյալ երևույթի վերաբերյալ ներպետական իրավունքում հայտնի կարգավորումները՝ շաղկապվելով անհրաժեշտ պաշտպանության ու ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտների հետ, ինչն էլ հեռանկարային է դարձնում դրանց համատեքստում նաև հանցագործության պրովոկացիան վերաբերող որոշակի դրսևորումների շուրջ պատկերացումներ կազմելու, այդ կարգավորումներով հնարավոր օրենսդրական բացերը վերհանելու, ինչպես նաև ձևավորվող իրավական պրակտիկան ուղորոշելու առումով համապատասխան հետազոտություններ իրականացնելը: Ավելին, նույն օրենսգրքով հանցագործության պրովոկացիայի դասական ընկալումներից բխող անուղղակի դրույթներ են զետեղվել նաև Ընդհանուր և Հատուկ մասերի տարբեր կարգավորումներում, որոնց վերաբերյալ առավել խորքային հետազոտությունները՝ համապատասխան եզրահանգումներով և առաջարկներով ամփոփվել են աշխատանքում:

Հարկ է նշել, որ հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ արտասահմանյան երկրների տարբեր իրավական աղբյուրներում առկա է հարուստ պաշար: Ընդ որում՝ քննարկվող երևույթի առանձին դրսևորումներ հանդիպում են, ինչպես քրեական իրավունքի մի շարք ինստիտուցիոնալ կառուցակարգերում, այնպես էլ քրեական պատասխանատվություն սահմանող առանձին նորմերում:

Մասնավորապես, հանցագործության պրովոկացիան հարաբերակցվում է այնպիսի ինստիտուցիոնալ կառուցակարգերի հետ, ինչպիսիք են քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները, քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը, ինչպես նաև

պատժի շուրջ ձևավորված իրավահարաբերությունները: Բացի այդ, հանցագործության պրովոկացիան հարաբերակցվում է քրեական իրավունքի հիմնաքարային ինստիտուտներից մեկի՝ հանցակցության հետ: Ավելին, որոշ երկրներում հանցագործության պրովոկացիան համարվում է հանցակցության ձև:

Պետք է նաև ընդգծել, որ նյութական իրավունքում առկա դրսևորումներից գատ, հանցագործության պրովոկացիայի ինստիտուտի վերաբերյալ բարձր իրավական արժեք են ներկայացնում դատական պրակտիկայում ձևավորված իրավական դիրքորոշումները, որոնցից հատկապես պետք է առանձնացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված մոտեցումները, որոնց ոգուն համահունչ հետազոտվող օբյեկտի վերաբերյալ իր իրավական տեսակետերն է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ ուղենշելով այն հիմնական ուղղությունները, որոնցով դրա շուրջ ձևավորվող պրակտիկան կարող է զարգանալ:

Եվրոպական դատարանի վճիռներում քննարկվող ինստիտուտի վերաբերյալ կազմավորված իրավական արձանագրումների համատեքստում պետք է առանձնացնել՝ Պապյանն ընդդեմ Հայաստանի գործով, 2021 թվականի դեկտեմբերի 21-ին հրապարակված վճիռը, որով զարգացվեցին հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ մինչ այդ ձևավորված իրավական դիրքորոշումները:

Վերոգրյալի հիման վրա կարելի է փաստել, որ հանցագործության պրովոկացիայի էության, ինչպես նաև դրան առնչվող միջազգային փորձի, Եվրոպական դատարանի կողմից մշակված չափորոշիչների վերլուծությունը, դրանց արդյունքում գործող իրավակարգավորումների, պրակտիկայի գնահատումը և կատարելագործմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելը քրեական օրենսդրության համար ունեն օրակարգային նշանակություն, որով էլ պայմանավորված է սույն առենախոսության արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը հանցագործության պրովոկացիայի համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների

վերհանումը, դրա վերաիմաստավորումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար խնդիր է դրվել.

ա) սահմանել հանցագործության պրովոկացիայի հասկացությունը,

բ) ներկայացնել հանցագործության պրովոկացիայի էությունը և հատկանիշները՝ տալով հանցագործության պրովոկացիայի բովանդակությունը բնորոշող սահմանումը,

գ) արտասահմանյան փորձի ուսումնասիրության արդյունքում խմբավորել հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ իրավակարգավորումները,

դ) նախորդ երեք կետերի հիման վրա ուսումնասիրել ներպետական փորձը՝ առանձնացնելով այն ուղղակի և անուղղակի իրավադրույթները, որոնք արտահայտում են հանցագործության պրովոկացիայի առանձնահատկությունները,

ե) դատական պրակտիկայում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա դասակարգել այն հիմնական չափորոշիչները, որոնք անհրաժեշտ և բավարար են հանցագործության պրովոկացիայի տարրերի առկայությունը հավաստելու համար,

զ) ցույց տալ հանցագործության պրովոկացիայի զբաղեցրած տեղը քրեական իրավունքի Ընդհանուր մասում՝ հարաբերակցելով այն ինստիտուցիոնալ կառուցակարգերի հետ, որոնց հետ շոշափվում են հանցագործության պրովոկացիայի առանձին հատկանիշներ և գատորոշել գործող կարգավորումներում խնդրո առարկայի շուրջ առկա հիմնախնդիրները՝ վերջնարդյունքում հանդես գալով համապատասխան տեսական ու գործնական առաջարկներով,

է) հետազոտությունների արդյունքում կատարված եզրահանգումների, գիտական թեզերի և գործնական փորձի հիման վրա պարզել հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմ ամրագրելու անհրաժեշտությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն

հանցագործության պրովոկացիայի դրսևորումներին առնչվող հասարակական հարաբերություններն են:

Հետազոտության առարկան օրենքով հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական նորմերն են, ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները, վերաբերելի իրավակիրառ պրակտիկան, արտասահմանյան երկրների փորձն ու տեսական աղբյուրները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Հայրենական մասնագիտական գրականության մեջ

հանցագործության պրովոկացիայի թեման մինչ օրս համակարգային վերլուծության չի ենթարկվել, սակայն դրա որոշ հիմնախնդիրներ տեղ են գտել Ա. Գաբուզյանի, Ա. Մարգարյանի, Տ. Սիմոնյանի աշխատություններում: Հանցագործության պրովոկացիային տարբեր տեսանկյուններից անդրադարձ է կատարվել առավելապես արտասահմանյան հեղինակների կողմից, մասնավորապես, Ա. Սամուելսի, Ի. Ա. Վոլկովի, Բ. Վ. Վոլժենկինի, Վ. Ն. Բորկովի, Վ. Ա. Կոմիսսարովի և այլոց աշխատություններում:

Առանձնակի ուշադրության է արժանի Ե. Վ. Գովորուխինայի «Հանցագործության պրովոկացիայի հասկացությունը և իրավական հետևանքները», (2002 թվական), Ի. Ա. Ժարկիի՝ «Հանցագործության պրովոկացիան Ռուսաստանի քրեական իրավունքում» վերտառությամբ ատենախոսությունը (2021 թվական), որոնք սույն թեմային առնչվող համալիր հետազոտություններ են:

Բարձր գնահատելով հիշյալ գիտնականների արժեքավոր հետազոտությունները, որոնք մեծ ներդրում են ունեցել նաև քրեական իրավունքի գիտության զարգացման հարցում՝ հարկ է փաստել, որ վերը նշված ոլորտում բազմաթիվ հիմնախնդիրներ դեռևս լրացուցիչ լուսաբանման ու հետազոտման կարիք ունեն:

Ելնելով նշվածից՝ հետազոտության շրջանակներում մանրամասն անդրադարձ է կատարվել հատկապես հանցագործության պրովոկացիայի հասկացության, տարբեր դրսևորումների, դատավարական և նյութաիրավական հայեցակետերի, քրեական իրավունքի Ընդհանուր ու

Հատուկ մասերի առանձին ինստիտուտների ու նորմերի հարաբերակցությանը և իրականացվել հանցագործության պրովոկացիայի շուրջ տարբեր հիմնախնդիրների համապարփակ ու համալիր հետազոտություն, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու այս երևույթի առկա օրենսդրական բացերը և հակասությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են հանցագործության պրովոկացիային առնչվող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկայի նյութերը, այդ թվում՝ Եվրոպական դատարանի, Վճռաբեկ դատարանի, առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանների, այլ պետությունների դատարանների դատական ակտերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը:

Պայմանավորված հետազոտության օբյեկտի նպատակով և վերհանվող խնդիրներով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, այնպես էլ հատուկ՝ համակարգակառուցվածքային ու իրավահամեմատական մեթոդների օգտագործմամբ:

Հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսությունը հայրենական իրավագիտության շրջանակներում առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել հանցագործության պրովոկացիայի տեսական և գործնական հիմնախնդիրները:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գործնական առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի նորամուծություններից էր պրովոկացիայի որոշակի արտահայտումներն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտում, որտեղ պրովոկացիան

հանդես է գալիս որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակը բացառող պայման:

Չնայած նախատեսված կարգավորմանն ու պրովոկացիայի նկարագրությանը, այնուամենայնիվ պրովոկացիայի՝ որպես անհրաժեշտ պաշտպանության իրավիճակի բացակայության բացարձակ պայման դիտարկելու մոտեցումը այնքան էլ հիմնավորված չէ, քանզի այն յուրաքանչյուր դեպքում ենթակա է դիտարկման նաև պրովոկացիայի և դրա արդյունքում հասցվող վնասի միջև համաչափության տեսանկյունից:

Այս կապակցությամբ, առաջարկվել է՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի 7-րդ մասի՝ *«Անհրաժեշտ պաշտպանության վիճակը բացակայում է, եթե տեղի է ունեցել անհրաժեշտ պաշտպանության սադրում, այսինքն՝ երբ անձին վնաս պատճառելու նպատակով պաշտպանվողը նրան դրդել է հակահրավակ կամ ունեցած զենքերը կատարելու»* դրույթը վերախմբագրել ու ավելացնել *«և դրա արդյունքում հասցված վնասն ակնհայտորեն չի գերազանցել իրականացված սադրանքի բնույթին և վրանգավորությանը»* պայմանը:

Բոլոր այն դեպքերում, երբ սադրանքի բնույթին և վտանգավորությանը գերազանցող վնաս է հասցվում, ապա այս պարագայում սադրանք իրականացնող անձը հայտնվում է անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

2. Հնարավոր չէ անտեսել այն հանգամանքը, որ հանցագործության պրովոկացիայի ազդեցությունը ցանկացած պարագայում հանցագործություն կատարելու վճռականություն առաջացնելու ազդեցիկ գործոն է, ուստի առաջարկ է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքում ներառել քրեական պատասխանատվությունից ազատող նոր՝ ինքնուրույն կարգավորում, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքը լրացնել 83¹-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պրովոկացիայի արդյունքում առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքի հետևանքով էական վնաս չի հասցվել քրեական օրենքով պաշտպանվող օբյեկտին, կամ

վերջինս հարուցել է վնասը կամ այլ կերպ շփոթել հանցագործությանը պատճառված վնասը:»

3. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները անհրաժեշտ է լրացնել 13-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13) հանցանքը պրովոկացիայի ազդեցությամբ կատարելը».

Պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարելը չի կարող մեկնաբանվել գործող ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հանցանքը հանցագործությունից տուժած անձի հակաիրավական վարքագծի ազդեցության տակ կատարելու տիրույթում, քանզի պրովոկացիան իրեն ներհատուկ գծերով՝ տարբերվում է քրեաիրավական վերոհիշյալ դրույթից այնքանով որքանով, որ պրովոկացիայի պարագայում իրականում տուժում է այն անձը, ով կատարում է հանցանք՝ համապատասխան ներգործության արդյունքում, իսկ պրովոկատորը որոշ դեպքերում հնարավոր է որևէ կերպ չտուժի հրահրված անձի արարքից:

4. Աշխատանքի շրջանակներում հիմնավորվել է, որ թեև առկա որոշակի ընդհանրությունների՝ հանցագործության պրովոկացիան չի նույնանում հանցակցության ինստիտուտի հետ:

Պրովոկացիայի դեպքում բացակայում են հանցակցության սուբյեկտիվ հատկանիշները, ինչպես նաև «համատեղ մասնակցության» օբյեկտիվ հատկանիշը, որպիսի պայմաններում՝ նշված ինստիտուտները նույնացնելն առարկայագուրկ է: Պրովոկացիայի տարրերից են անձին քրեական հետապնդման ենթարկելու կամ այլ վնասակար հետևանքների առաջացման նպատակը և այդ նպատակներին հասնելու քողարկված մեթոդները, ինչպիսի բաղադրիչները հանցակցությունում բացակայում են և հանցագործության պրովոկացիան չի կարող կլանվել հանցակցության կարգավորման տիրույթում, հետևաբար դրանց միջև ուրվագծվում է իրավական բաժանարար:

5. Առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքը լրացնել հետևյալ իրավանորմով:

«477՝ Հանցագործության պրովոկացիան.

1. Հանցագործության պրովոկացիան՝ հանցակցության հատկանիշների բացակայության պարագայում՝ քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարմանը անձին հրահրելուն ուղղված ներգործությունը՝ տվյալ անձի նկատմամբ քրեական պատասխանատվության հիմքեր ստեղծելու, շանտաժի, շորթման կամ նրան ֆիզիկական, գույքային կամ այլ էական վնաս հասցնելու նպատակով

պատժվում է՝ (...)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, կամ նման լիազորություններ ունեցող անձանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից՝ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության շրջանակներում, կամ

2) բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով՝

պատժվում է՝

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք,

պատժվում է՝

(...)»

6. Հանցագործության պրովոկացիան կարող է դրսևորվել միայն ուղղակի դիտավորությամբ, թեև պրովոկացիայի ենթարկված անձի կողմից կարող է կատարվել նաև անզգույշ հանցանք: Ըստ էության՝ պրովոկատորի համար էական չէ, թե կոնկրետ ինչ հանցանք կկատարվի պրովոկացիայի ենթարկված անձի կողմից, քանի որ նպատակը նրան քրեական պատասխանատվության ենթարկելը կամ վերջինիս համար այլ անբարենպաստ հետևանքներ առաջացնելն է, հետևաբար՝ այդ դեպքում պրովոկացիայի ենթարկված անձի կողմից կատարված արարքը չի կարող մեղսագրվել պրովոկատորին, ով ենթակա է առանձին քրեական պատասխանատվության:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների նշանակությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ հայրենական իրավունքում առաջին անգամ մշակվել է հանցագործության պրովոկացիայի տեսական և գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր աշխատանք: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական ուսումնասիրությունների և այն դասընթացների շրջանակներում, որոնց առարկան առնչվում է հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական դրսևորումներին: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության մեջ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 9 գիտական հոդվածներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկույցների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 6 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ «Հանցագործության պրովոկացիայի տեսական հիմունքները քրեական իրավունքում» վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երկու պարագրաֆից:

«Պրովոկացիան որպես սոցիալական երևույթ» վերտառությամբ 1.1 պարագրաֆում՝ հանցագործության պրովոկացիայի էությունն ու բովանդակությունը ցույց տալու նպատակով, ուսումնասիրվել է պրովոկացիայի՝ որպես սոցիալական կյանքի բաղադրատարրի հատկանիշները, ներկայացվել պրովոկացիայի՝ որպես համընդգրկուն երևույթի բնորոշիչ առանձնահատկությունները:

«Հանցագործության պրովոկացիայի բնորոշումը քրեական իրավունքում» վերտառությամբ 1.2 պարագրաֆում ուսումնասիրվել է հանցագործության պրովոկացիայի էությունը, դրա բնութագրիչ առանձին տարրերը և տեսությամբ առկա տարակերպ բնութագրումների պայմաններում՝ բացահայտվել է դրա բովանդակությունն ու բնորոշիչ գծերը:

Երկրորդ գլուխը՝ «Հանցագործության պրովոկացիայի իրավական կարգավորումը նյութական և դատավարական իրավունքում» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ կարգավորումները արտասահմանյան և ներպետական քրեական իրավունքում» վերտառությամբ 2.1 պարագրաֆում ուսումնասիրվել է հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ արտասահմանյան փորձը՝ ընդ որում, ինչպես նյութական, այնպես էլ դատավարական և այլ իրավական այլ աղբյուրների համատեքստում և արդյունքում խմբավորվել են դրա տարբեր դրսևորումները, ինչի լույսի ներքո ուսումնասիրվել է նաև ներպետական փորձը և կատարվել են համապատասխան փաստագրումներ:

«Հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական առանձնահատկությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում» վերտառությամբ 2.2 պարագրաֆում ուսումնասիրվել են հետազոտության թեմայի վերաբերյալ բարձր դատարանների կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները

և դրանց տիրույթում ցույց են տրվել այն չափորոշիչները, որոնցով արձանագրվում է հանցագործության պրովոկացիայի առկայությունը:

Երրորդ գլուխը՝ «Հանցագործության պրովոկացիայի հիմնախնդիրները քրեական իրավունքի ընդհանուր և հատուկ մասերում» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հանցագործության պրովոկացիայի հիմնախնդիրները քրեական իրավունքի ընդհանուր մասում» վերտառությամբ 3.1 պարագրաֆում հանցագործության պրովոկացիան հարաբերակցվել է քրեաիրավական մի շարք ինստիտուցիոնալ կառուցակարգերի հետ: Մասնավորապես՝

- շեշտադրվել են անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի շրջանակներում պրովոկացիայի դրսևորումներում առկա որոշակի խնդիրները և այդ կապակցությամբ ներկայացվել օրենսդրական լրամշակում իրականացնելու առաջարկ,

- փաստվել է պրովոկացիայի համար քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանքի նախատեսման անհրաժեշտության բացակայությունը,

- ցույց է տրվել հանցակցության և պրովոկացիայի տարբերությունները ու միաժամանակ՝ ընդգծվել, որ դրանք չեն կարող նույնանալ,

- հիմնավորումներ են ներկայացվել՝ կապված պրովոկացիայի՝ իբրև քրեական պատասխանատվությունն ազատող հիմք նախատեսելու և դրա հիման վրա օրենսդրական լրացում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ,

- արդարացված է համարվել պրովոկացիայի ազդեցությամբ հանցագործություն կատարելը որպես պատիժը մեղմացնող հանգամանք դիտարկելը և այդ կապակցությամբ առաջարկվել է օրենսդրական լրացում կատարելու առաջարկ:

«Հանցագործության պրովոկացիայի հիմնախնդիրները քրեական իրավունքի հատուկ մասում» վերտառությամբ 3.2 պարագրաֆում ցույց են տրվել հանցագործության պրովոկացիայի մասնավոր դրսևորում հանդիսացող կաշառքի պրովոկացիայի հիմնախնդիրները և ներկայացվել օրենսդրական լրամշակումներ իրականացնելու առաջարկներ:

Միևնույն ժամանակ, քննարկման առարկա են դարձվել

հանցագործության պրովոկացիայի հակաիրավականությունն ու վտանգավորության մակարդակը, քրեաիրավական գործիքներով դրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը և ՀՀ քրեական օրենսգրքի գործող կանոնակարգումների միջոցով դեպքերում պատշաճ իրավական գնահատական տալու հնարավորության վերաբերյալ մի շարք հարցեր:

Արդյունքում առաջարկվել է հանցագործության պրովոկացիայի համար նախատեսել քրեական պատասխանատվություն սահմանող առանձին նորմ՝ միաժամանակ տրվելով դրա օրենսդրական ձևակերպումը: Միաժամանակ, առանձին-առանձին հետազոտվել է հանցագործության պրովոկացիայի՝ որպես հանցակազմի առանձին տարրերը և կատարվել համապատասխան արձանագրումներ ու առաջարկներ:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Կատարված վերլուծությունների արդյունքում ընդգծվել է, որ թեև հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ մի շարք իրավակարգավորումների կարգադրոյթներում չի գործածվում «պրովոկացիա» տերմինը և փոխարենը նշվում է՝ «սադրանք» եզրույթը, սակայն, տվյալ բառերի էությունները նույնական են:

Այս հանգամանքով պայմանավորված, ելնելով նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանությունից, առաջարկվել է օրենսգրքում կիրառել մեկ տերմին, այն՝ «պրովոկացիա» եզրույթը, որը բխում է նաև իրավունքի մի շարք աղբյուրներում, որոնց թվում՝ միջազգային հանրաճանաչ փաստաթղթերում և դրանց պաշտոնական՝ հայերեն թարգմանություններում, ինչպես նաև ներպետական իրավունքում առավել հաճախ հանդիպող եզրութաբանությունից:

2. Արտասահմանյան երկրների իրավական տարբեր աղբյուրների համակողմանի ուսումնասիրությունը վեր է հանում տարաբնույթ մոտեցումներ, որոնց հիման վրա առանձնացվում են քննարկվող ինստիտուտի հետևյալ դասակարգումները.

1) Հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ դրույթները դրսևորվում են նյութական իրավունքում (Ֆրանսիա, Իսպանիա,

Լեհաստան, Լիտվա, Էկվադոր, Արգենտինա, Ռուսաստան, Բելառուս, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, Հարավային Սուդան, Չինաստան):

Ընդ որում՝ տվյալ խմբում առկա կարգավորումների համաձայն պրովոկացիան՝ վերաբերվում է հանցակցության ինստիտուտին (Ֆրանսիա, Իսպանիա, Լեհաստան), դիտարկվում է իբրև մեղմացուցիչ հանգամանք (Լիտվա, Օման, Չինաստան), կարգավորվում է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտում (Իսպանիա, Էկվադոր, Արգենտինա, Ուզբեկստան, Չինաստան), հանդիսանում է քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք (Լիտվա), համարվում է քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք (ԱՄՆ), նախատեսվում է որպես հանցակազմն արտոնյալ դարձնող հանգամանք (Չինաստան, Հարավային Սուդան), ամրագրված է որպես առանձին հանցակազմ և տրվում է դրա սահմանումը (Վրաստան, Ղազախստան), կարգավորված է մասնավոր դրսևորումներով՝ առանձին հանցատեսակների պրովոկացիայի դրսևորումների վերաբերյալ դրույթներ պարունակող իրավակարգավորումներով (Բելառուս, Բուլղարիա, Ղրղզստան, Լիտվա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա):

2) Հանցագործության պրովոկացիայի դրույթները կարգավորված են դատական պրակտիկայով (Մեծ Բրիտանիա, Կանադա):

3) Չնայած քրեաօրենսդրական կարգավորումների բացակայությանը, հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ դրույթներ ամրագրված են այլ նորմատիվ իրավական ակտերում (Ավստրալիա, Ճապոնիա):

3. ՀՀ օրենսդրությամբ նկատելի է պրովոկացիայի վերաբերյալ ձևավորված իրավունքի զարգացման դինամիկա: Հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ ներպետական իրավակարգավորումների համակցությունը ցույց է տալիս, որ՝

- այն ներպետական իրավունքում դրսևորվում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի հայեցակետերում,

- ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում սահմանված են ինչպես ուղղակի այնպես էլ անուղղակի կարգավորումներ, որոնց տարրերի առկայությունը նախանշում է հանցագործության պրովոկացիայի համար

քրեական պատասխանատվության առանձնահատկությունները, իսկ դրանց մանրակրկիտ ուսումնասիրությունը կարող է հիմք հանդիսանալ դրանցում՝ պրովոկացիայի վերաբերյալ հստակեցումներ իրականացնելու ու այդ երևույթի գծերն առավել արտահատված ներկայացնելու համար:

4. Եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումների համադրմամբ սահմանվել են այն ընդհանուր չափորոշիչները, որոնք սահմանաբաժան են հանդիսանում իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից իրականացվող գաղտնի միջոցառումների լեգիտիմության և հանցագործության պրովոկացիայի միջև մասնավորապես՝ առանձնացվել են հետևյալ չափանիշները.

1) Իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց պասիվ ներգործության և նրանց կողմից ճնշում գործադրելու արգելքի սկզբունքները, կարելի է արձանագրել, որ Գաղտնի գործողությունները չպետք է ուղեկցվեն անձի նկատմամբ ակտիվ ձեռնարկումներով:

2) Գաղտնի գործողություն իրականացնող սուբյեկտի կողմից նախաձեռնություն ցուցաբերելու արգելքը, ինչի հիման վրա կարելի է փաստել, որ Գաղտնի գործողություն իրականացնող անձի մոտ սուբյեկտիվ կողմից ի սկզբանե, երբ հայտնի չէ տվյալ առ այն, որ անձը նախատրամադրված է եղել կատարելու քրեական իրավախախտում, չպետք է որևէ ներգործություն ցուցաբերելու նախաձեռնություններ լինեն:

3) Իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից կատարվող Գաղտնի գործողությունների օրինականությունը և դրանց նկատմամբ սահմանված իրականացվող վերահսկողությունը, որի բացակայությունն էապես բարձրացնում է այն իրականացնող սուբյեկտի հակաիրավական վարքագծի և հանրային վտանգավորության սանդղակը:

4) Որպես առանձին չափանիշ սահմանվել է նաև նախորդ կետում նշված սուբյեկտների կողմից ներգործություն ցուցաբերելու՝ որպես ծայրահեղ (վերջին) միջոցի (last resort) պայմանը, որի պարագայում՝ այն

պետք է իրականացվի առնվազն կատարվելիք հանցանքի մասին հստակ տեղեկություններ ունենալու պարագայում, դրա համար հիմք հանդիսացած հանգամանքների փաստական և իրավական հանգամանքների մանրամասն ու հիմնավորված արձանագրմամբ, կատարվող գործողության նպատակին և գործադրվող միջոցների միջև համաչափությամբ:

5. Անդրադարձ է կատարվել տեսությամբ հաճախ զուգահեռներ անցկացված հանցագործության պրովոկացիայի և աֆեկտի միջև և արձանագրվել, որ ինչպես պրովոկացիան, այնպես էլ աֆեկտը համարվում են անձի հոգեկան վիճակի, վարքագիծը տիրապետելու և սեփական արարքների նշանակությունը գիտակցելու վրա ազդող գործոններ:

Միաժամանակ, պրովոկացիան հանդիսանում է քողարկված բնույթի արարքների ամբողջություն, որի նպատակը անձին հանցագործության կատարմանը «ներքաշելն» է, մինչդեռ անձին հոգեկան խիստ հուզմունքի հասցնող անձը վերջինիս մոտ հանցանք կատարելու վճռականություն հարուցելու նպատակ չի հետապնդում: Հետևաբար՝ հարկ է արձանագրել, որ աֆեկտի պարագայում տվյալ հոգեվիճակի առաջացման պատճառ հանդիսացող անձը չի ձգտում մեկ այլ անձի մոտ առաջացնել հոգեկան խիստ հուզմունքի վիճակ կամ առնվազն անտարբեր է նրա հուզական վիճակի նկատմամբ, մինչդեռ պրովոկացիայի պարագայում սուբյեկտը մտադրված է «մոլորության» մեջ գցել անձին և հենց դրա միջոցով վերջինիս համար առաջացնել բացասական հետևանքներ:

6. Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտներում առկա իրավակարգավորումների օրինակով՝ պրովոկացիան անհրաժեշտ է դիտարկել որպես անհաղթահարելի ուժի, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի առկայությունը բացառող պայման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանելով հետևյալը.

«4. Անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից սույն հոդվածով նախատեսված հիմքով, եթե թույլ է տրվել սույն հոդվածի 1-ին հիմքով նախատեսված որևէ իրավիճակի պրովոկացիա, այսինքն՝ օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով ինքն է

ստեղծել անհաղթահարելի ուժ կամ մեկ ուրիշին դրդել է իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրել՝ հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն անհաղթահարելի ուժի կամ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արդարացնելու համար»:

7. Տարբեր երկրների օրենսդրական կարգավորումներում և տեսությունում հաճախակի հանդիպող այն մոտեցումները, որ հանցագործության պրովոկացիան պրովոկացիայի ենթարկվող անձի համար պետք է դիտարկել որպես քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք, սույն աշխատանքի շրջանակներում կատարված հետազոտության շրջանակներում արդարացված չի համարվել և նման փորձի փոխարկման անհրաժեշտությունը համարվել է ոչ ռացիոնալ:

8. Արձանագրվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված՝ հանցագործության պրովոկացիայի մասնավոր դրսևորում հանդիսացող կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի վերաբերյալ իրավանորմում որոշ ձևակերպումներ խնդրահարույց են, քանի որ չեն բխում հանցագործության պրովոկացիայի էությունից և հիմնավորվել է, որ առավել արդարացված կլիներ դրանում նախատեսել՝ տուժողի կողմից ակնհայտ կերպով հանցագործության առարկան ստանալու առաջարկից հրաժարվելու դեպքում հանցավորի կողմից տվյալ անձի նկատմամբ հոգեբանական ազդեցություն գործադրելու եղանակով վերջինիս հանցագործության առարկան ստանալուն հրահրելու պայմանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածի նկարագրական մասի ձևակերպումը՝ իրավական որոշակիության տեսանկյունից, այնքանով, որքանով չի բացառում տվյալ հանցագործության իրականացումն ընդհանրապես տուժողի հետ չհաղորդակցվելով, ոչ միայն չի բխում հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ ընդհանրացված ընկալումներից, այլև ինքնին հակաիրավական արարքին գնահատական տալու և որակելու տեսանկյունից ստեղծում է խնդրահարույց իրավիճակ, ուստի նախորդ պարբերությամբ հիշատակված պայմանի նախատեսումը

ելակետային կհամարվի արարքում՝ կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի հանցակազմի տարրերի առկայությունը որոշելիս:

9. Հանցագործության պրովոկացիայի համար առանձին քրեական պատասխանատվություն նախատեսող՝ սույն աշխատանքում առաջարկված հանցակազմի տարրերի դիտարկմամբ արձանագրվել է ներքոշարադրյալը:

Հետազոտելով հանցագործության պրովոկացիայի օբյեկտիվ առանձնահատկությունները՝ փաստվել է, որ

1) անկախ այն փաստից, որ ցանկացած դեպքում նախևառաջ դրա գործադրմամբ վնաս է հասցվում արդարադատության շահին, որը դրսևորվում է իրական փաստերի խեղաթյուրմամբ, ուստի տվյալ արարքի անմիջական օբյեկտ պետք է համարել արդարադատության շահը, միաժամանակ, հանցագործության պրովոկացիայի արդյունքում հասցված վնասների ծավալները կարող են ներառել նաև քրեական օրենքով պաշտպանվող այլ օբյեկտներ, ինչն էլ ենթադրում է, որ պրովոկացիայի վերաբերյալ կանոնակարգումները չպետք է եզրափակվեն բացառապես քրեական պատասխանատվության նախահիմքեր ստեղծելով, այլ ներառեն նաև այլ անբարենպաստ հետևանքներ՝ առանց քննարկվող ինստիտուտի նեղացման:

2) Հիմք ընդունելով հանցագործության պրովոկացիայի լայնատիրույթ սահմանները, կարելի է արձանագրել, որ կաշառքի պրովոկացիան ևս կարող է ներառվել հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ առաջարկված կարգավորման մեջ, ուստի նպատակահարմար կլինի, որ կաշառքի պրովոկացիայի առանձին նորմը համարվի ուժը կորցրած և կլանվի հենց նախատեսվելիք իրավանորմում:

3) Ցանկացած դեպքում պրովոկացիայի գործադրման հարցը որոշելու տեսանկյունից կանխորոշիչ է այն հոգեբանական ազդեցությունը, որը մյուս անձի մոտ վճռականություն է ստեղծում կատարելու հանցագործություն, այսինքն՝ առաջ է բերում հանցագործության պրովոկացիայի բաղկացուցիչ մաս հանդիսացող՝ հանցագործության մղելու գործոնը, հետևաբար առաջարկվում է հանցագործության պրովոկացիայի օբյեկտիվ կողմի կատարումը դիտարկել նաև անգործությամբ՝ պայմանով, որ այն պատճառահետևանքային կապի մեջ գտնվի անձի մոտ հանցագործություն

կատարելու վճռականության ձևավորման հետ:

Ի մի բերելով հանցագործության պրովոկացիայի սուբյեկտիվ տարրերի շուրջ կատարված ուսումնասիրությունները՝ արձանագրվել է, որ՝

- հանցագործության պրովոկացիան կարող է իրականացվել, ինչպես իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից, այնպես էլ ընդհանուր սուբյեկտի կողմից,

- տեսականորեն չի բացառվում պրովոկացիայի սուբյեկտ դիտարկել նաև իրավաբանական անձին:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական առանձնահատկությունները մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում, Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր, 2022, 7-9 (277-279), 54-61 էջեր:

2. Կաշառքի պրովոկացիայի հիմնախնդիրները հանցագործության պրովոկացիայի առանձնահատկությունների լույսի ներքո, Օրենքի պատվար, N 16, 2023, 102-111 էջեր:

3. Հանցագործության պրովոկացիայի և հանցակցության հարաբերակցության հիմնահարցերը, Պետություն և իրավունք, Եր., 2023, N 2 (96), 236-241 էջեր:

4. Հանցագործության պրովոկացիայի օբյեկտիվ հատկանիշները, Դատական իշխանություն, ապրիլ-սեպտեմբեր 2023 4-9 (286-291), 69-75 էջեր:

5. Субъективные характеристики провокации преступления տպագիր, Регион и мир, 2023, № 4, 19-21 էջեր:

6. Հանցագործության պրովոկացիայի բնորոշումը քրեական իրավունքում, Օրենքի պատվար, N 15, 2023, 88-100 էջեր:

7. Հանցագործության պրովոկացիայի դրսևորումներն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի շրջանակներում տպագիր, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան Տեղեկագիր, 3 (111),

2023 213-224 էջեր:

8. Current developments of legal regulations on crime provocation in ra criminal code, Պետություն և իրավունք, Եր., 2024, N 1 (98), 100-109 էջեր:

9. Հանցագործության պրովոկացիայի տեղն ու նշանակությունը քրեական իրավունքի ընդհանուր մասի որոշ ինստիտուցիոնալ կառուցակարգերում, Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2024, 7-9 (301-303), 33-48 էջեր:

МЕЛИК АРТАШЕСОВИЧ МЕЛИКЯН

ПРОВОКАЦИЯ ПРЕСТУПЛЕНИИ В УГОЛОВНОМ ПРАВЕ

Провокация преступления, являясь широкомасштабным уголовно-правовым явлением, в своих многополярных проявлениях проявляется в различных источниках уголовного права, соотносясь с рядом уголовно-правовых институциональных структур и отдельными видами преступлений, занимает важное место и значение в сфере уголовного права.

Следует отметить, что в сообществе опыта зарубежных стран, сформировавшейся в судебной практике, отдельных доктринальных взглядов даже часто выдвигаются противоречивые тезисы, которые в теоретическом и практическом аспектах приводят к проблемным ситуациям.

Наряду с богатым опытом, накопленным в вышеупомянутых источниках, во внутригосударственном праве до принятия действующего Уголовного кодекса, провокация преступлений была относительно малоизученным институтом, в отношении которого, однако, уже намечаются тенденции развития в связи с соответствующими изменениями и дополнениями, внесенными в общую и специальную части.

Точки зрения, выдвинутые в выполненной работе, связаны с универсальными представлениями и подходами к объекту исследования, в отношении которых были сделаны соответствующие выводы, а в некоторых случаях были представлены предложения.

Изучая особенности провокации как составной части общественной жизни, представлены отличительные черты провокации как целостного явления, раскрыта сущность провокации преступления и отдельные элементы, характеризующие ее, а также в условиях организационных характеристик, существующих в теории, даны определенные теоретические характеристики.

Были сгруппированы различные проявления, касающиеся уголовной провокации, в свете чего был также изучен внутригосударственный опыт и были сделаны соответствующие документальные подтверждения, при этом наряду с прямыми положениями, касающимися уголовной провокации, были выделены такие косвенные проявления, присутствующие в ряде нормативных актов, которые открывают новые горизонты, в части осуществления действий по уголовной провокации, тем самым способствуя динамике развития права по рассматриваемому вопросу.

Были рассмотрены правовые позиции, сформированные Кассационным судом и Европейским судом по правам человека по теме исследования, и в их сфере были показаны критерии, с помощью которых фиксируется наличие провокации преступления.

Были выделены проблемы провокации преступления в общей части уголовного права, обоснован факт нецелесообразности предусмотрения провокации как обстоятельства, исключающего уголовную ответственность, были подчеркнуты определенные проблемы, существующие в проявлениях провокации в рамках института необходимой защиты, и в связи с этим было представлено предложение о внесении изменений в законодательство, также был задокументирован факт отсутствия необходимости предусмотреть отдельное обстоятельство, исключающее уголовную ответственность за провокацию. В то же время были показаны различия между соучастием и провокацией, и было подчеркнуто, что они не могут быть идентифицированы. Были представлены обоснования относительно необходимости предусмотреть провокацию в качестве основания для освобождения от уголовной ответственности и на ее основе внести положительное дополнение. Кроме того, было сочтено оправданным рассматривать совершение преступления под влиянием провокации как обстоятельство, смягчающее наказание, и в связи с этим было предложено внести законодательное дополнение.

Обращаясь к проблемам провокации преступления в рамках специальной части уголовного права, были показаны определенные проблемы состава преступления, связанные с провокацией взятки, являющейся частным проявлением провокации преступления, и были представлены предложения по внесению изменений в законодательство в отношении них.

В конце концов, предметом обсуждения стала противоправность и уровень опасности провокации преступления, проблемы, касающиеся способности дать надлежащую правовую оценку этому явлению посредством действующих норм Уголовного кодекса РФ. В результате была предложена необходимость предусмотреть отдельную норму, устанавливающую уголовную ответственность за возбуждение преступления, с ее законодательной формулировкой. В рамках представленного были отдельно изучены отдельные элементы предлагаемого состава преступления и составлены соответствующие протоколы.

Диссертация подготовлена на кафедре уголовного права и уголовного права юридического факультета ЕГУ. Результаты исследования отражены в 9 научных статьях, опубликованных автором. Ряд положений диссертации были представлены диссертантом в рамках докладов и научных докладов, представленных на кафедре.

MELIK ARTASHES MELIKYAN

PROVOCATION OF CRIME IN CRIMINAL LAW

Provocation of a crime, being a large-scale criminal-legal phenomenon, in its multipolar manifestations is manifested in various sources of criminal law, correlating with a number of criminal-legal institutional structures and individual types of crimes, occupies an important place and significance in the field of criminal law.

It should be noted that in the community of foreign countries' experience, formed in judicial practice, individual doctrinal views often even put forward contradictory theses, which in theoretical and practical aspects lead to problematic situations.

Along with the rich experience accumulated in the above-mentioned sources, in domestic law before the adoption of the current Criminal Code, the provocation of crimes was a relatively little-studied institution, in relation to which, however, development trends are already emerging in connection with the corresponding changes and additions made to the general and special parts.

The points of view put forward in the completed work are related to universal ideas and approaches to the object of research, in relation to which corresponding conclusions were made, and in some cases proposals were presented.

Studying the features of provocation as an integral part of public life, the distinctive features of provocation as a holistic phenomenon are presented, the essence of provocation of a crime and individual elements characterizing it are revealed, and also in the conditions of organizational characteristics existing in theory, certain theoretical characteristics are given.

Various manifestations related to criminal provocation were grouped, in light of which domestic experience was also studied and relevant documentary evidence was made, while along with direct provisions related to criminal provocation, indirect manifestations were identified, present in a number of normative acts, which open up new horizons in terms of the implementation of actions on criminal provocation, thereby contributing to the dynamics of the development of law on the issue under consideration.

The legal positions formed by the Court of Cassation and the European Court of Human Rights on the topic of the study were examined, and in their area the criteria were shown by which the presence of provocation of a crime is

recorded.

The problems of provocation of a crime in the general part of criminal law were highlighted, the fact of the inappropriateness of providing for provocation as a circumstance excluding criminal liability was substantiated, certain problems existing in the manifestations of provocation within the framework of the institute of necessary defense were emphasized, and in connection with this, a proposal was presented to amend the legislation, and the fact of the lack of need to provide for a separate circumstance excluding criminal liability for provocation was also documented.

At the same time, the differences between complicity and provocation were shown and it was emphasized that they cannot be identified. Justifications were presented regarding the need to provide for provocation as a basis for exemption from criminal liability and to make a positive addition on its basis. In addition, it was considered justified to consider the commission of a crime under the influence of provocation as a circumstance mitigating punishment, and in this regard, a legislative addition was proposed.

Addressing the problems of provocation of a crime within the framework of a special part of criminal law, certain problems of the composition of a crime related to provocation of a bribe, which is a particular manifestation of provocation of a crime, were shown, and proposals were presented for amendments to the legislation in relation to them.

In the end, the subject of discussion was the illegality and level of danger of provoking a crime, problems related to the ability to give a proper legal assessment of this phenomenon through the current norms of the Criminal Code of the Republic of Armenia. As a result, it was proposed to provide for a separate norm establishing criminal liability for initiating a crime, with its legislative formulation. Within the framework of the presented, individual elements of the proposed composition of the crime were separately studied and the corresponding protocols were drawn up.

The dissertation was prepared at the Department of Criminal Law and Criminal Law of the Law Faculty of ESU. The results of the study are reflected in 9 scientific articles published by the author. A number of provisions of the dissertation were presented by the candidate in the framework of reports and scientific reports presented at the department.